ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան 04.12.2013թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳԲԽ-44/13 բողոքը քննող հանձնաժողովի

ԳԲԽ-44/13 բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով գնումների բողոքարկման խորհրդի անունից, քննելով «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2013թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը, ինչպես նաև ուսումնասիրելով ԳԲԽ-44/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացված եզրակացությունը պարզեց.

1. «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքով «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն հայտնել է, որ Կենտրոնի հետ 26.08.2013թ. կնքել է N «ՇՀԱՊՁԲ-11/4-139» շրջանակային համաձայնագիր և գրանցվել որպես հնարավոր մասնակից:

Ընկերությունը հայտնել է, որ «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն հայտարարել է «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով դեղորայքի գնման ընթացակարգ, որի բացման օրը եղել է 25.10.2013թ.:

«Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն նշված ընթացակարգի մասին տեղեկացվել և մասնակցել է, սակայն «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը

ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը զգալի չափաբաժինների մասով գնահատել է անհամապատասխան՝ պատճառաբանելով, որ չի համապատասխանում հրավերով պահանջվող պայմաններին՝ գնային առաջարկում յուրաքանչյուր չափաբաժնի համար չի նշվել պահանջվող դեղորայքի տեխնիկական բնութագրերը: Տվյալ դեպքում Պատվիրատուն շրջանցել է գնային առաջարկի հաստատված օրինակելի ձևը:

«Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն տեղեկացրել է, որ Պատվիրատուն գնման ընթացակարգը կազմակերպել է խախտումով՝ գնային առաջարկում յուրաքանչյուր չափաբաժնով պահանջել է գին մեկ միավորի համար և ոչ թե անհրաժեշտ քանակի համար, որի արդյունքում խախտել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետը:

Ըստ «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն գործել է անօրինաչափ, սխալ է պահանջել, գնահատել և համեմատել գնման առարկայի գինը և տեխնիկական բնութագրով պահանջվող համապատասխանությունը:

«Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն խնդրել է դադարեցնել «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը, իսկ պայմանագրեր կնքված լինելու դեպքում, կնքված պայմանագրերը հայտարարել չեղյալ:

<u>2. «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 18.11.2013թ. N 04/032-1703 գրությամբ դիմել է «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 14.11.2013թ. «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն 20.11.2013թ. N 121-77 գրությամբ «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն բողոքը ներկայացրել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումով, այն է, եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա

բողոքը կարող է ներկայացվել միայն նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն 18.11.2013թ. դրությամբ արդեն կնքել է պայմանագրեր հաղթող կազմակերպությունների հետ և դեղորայքի մի մասը մատակարարվել է, որն էլ իր հերթին մասամբ դուրս է գրվել ազգաբնակչությանը:

Պայմանագրերը կնքվել են համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ կետի, այն է՝ Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն հայտնել է, որ «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով ընթացակարգի հրավերը 16.10.2013թ. ուղարկվել է բոլոր գրանցված մասնակիցներին: Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 25.10.2013թ.: «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստը 25.10.2013թ-ին կասեցվել է՝ առաջարկված նվազագույն գների հավասարությամբ պայմանավորված և շարունակվել է 01.11.2013թ-ին:

«ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկի որոշակի չափաբաժինները գնահատել է անբավարար և մերժել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի, այն է՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի հայտով նշված չափաբաժինները գնահատվել են անբավարար, քանի որ չեն նշվել դեղորայքի տեխնիկական բնութագրերը (դոզաները, սրվակները, շշիկների տարողությունը և այլն), որի հետևանքով անհնար է դարձել առաջարկվող դեղի ամբողջական պատկեր ստանալ և գնահատել: Հանձնաժողովը որոշել է, որ այն չի ներկայացվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի և հրավերի տեխնիկական բնութագրի համաձայն, այլ դեղորայքի տեխնիկական բնութագրերը ներկայացվել են ընտրողաբար:

<u>3. ԳԲԽ-44/13 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի դիրքորոշումը.</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը հանձնաժողովին ներկայացրել է իր եզրակացությունը և առաջարկել է «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել, «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի և «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի և «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի միջև 12.11.2013թ. կնքված N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/8, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի՝ 12.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/4, «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի՝ 12.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/9, «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի՝ 13.11.2013թ. N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/1, «Լիկվոր» ՓԲԸ-ի՝ 14.11.2013թ. N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/3, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի՝ 14.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/5, «Լամբրոն-Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ի՝ 14.11.2013թ. N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/2 և «ԱրմՖարմ» ՍՊԸ-ի՝ 14.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/7 ծածկագրերով պայմանագրերի կատարման ժամկետները կրճատել՝ սահմանելով մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը ներառյալ:

4. ԳԲԽ-44/13 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-44/13 բողոքը քննող հանձնաժողովի հիմնավորումները և եզրահանգումները.

Հանձնաժողովն ուսումնասիրել է «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի (այսուհետև՝ նաև Ընկերություն) կողմից 14.11.2013թ. ներկայացված բողոքը, «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերը (այսուհետև՝ նաև Հրավեր) և գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 25.10.2013թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 2 և 01.11.2013թ. ժամը 13:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունները, «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի (այսուհետև՝ նաև Պատվիրատու) 20.11.2013թ. N 121-77 գրությունը և գրությամբ ներկայացված փաստաթղթերը, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի եզրակացությունը:

ՀՀ Արմավիրի մարզի «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպվել է «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգ (այսուհետև՝ նաև Ընթացակարգ), որը բաղկացած է եղել թվով 122 չափաբաժիններից:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով, ի թիվս այլ ընկերությունների հայտ է ներկայացրել նաև «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն:

1. «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Պատվիրատուն գնման ընթացակարգը կազմակերպելիս Հրավերի տեխնիկական բնութագրով՝ յուրաքանչյուր չափաբաժնով, պահանջել է գին մեկ միավորի և ոչ թե անհրաժեշտ քանակի համար և խախտել ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետը՝ խնդրելով դադարեցնել «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը:

«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն 20.11.2013թ. Կենտրոնին ներկայացրած N 121-077 գրությամբ հայտնել է, որ «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված չափաբաժինները չեն համապատասխանել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով և հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին և «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկը որոշակի չափաբաժինների մասով գնահատել է անբավարար և մերժել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:

Հանձնաժողովի 25.10.2013թ. ժամը 14:00-ին կայացած նիստի N 2 արձանագրության 1-ին կետով արձանագրվել է, որ Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ են ներկայացրել «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ն, «Լամբրոն-Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ն, «Լիկվոր» ՓԲԸ-ն, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ն, «Ցիտո-Ֆարմ» ՍՊԸ-ն, «ԱրմՖարմ» ՍՊԸ-ն, «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ն և «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ն:

Նույն արձանագրության 2-րդ կետով նշվել են Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած մասնակիցների առաջարկված գները Հրավերով պահանջվող ապրանքատեսակների մեկ միավորի արժեքով:

Կենտրոնում ս.թ. նոյեմբերի 27-ին ժամը 15:00-ին ԳԲԽ 44/13 բողոքի շրջանակներում կազմակերպված լսումների ընթացքում «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը պնդեց Կենտրոնին 14.11.2013թ. բողոքով ներկայացրած փաստարկները՝ հայտնելով, որ Պատվիրատուի կողմից խախտվել է ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետը, քանի որ Ընթացակարգի հրավերով մասնակիցների գնային առաջարկները պահանջվել և

գնահատվել են ոչ թե անհրաժեշտ քանակի, այլ առաջարկվող ապրանքատեսակի մեկ միավորի գնով:

Հանձնաժողովի այն հարցին, թե Պատվիրատուի կողմից գնային առաջարկները ի՞նչ ձևով են գնահատվել, Պատվիրատուի ներկայացուցիչները հայտնեցին, որ մասնակիցների գնային առաջարկները համեմատվել են յուրաքանչյուր չափաբաժնով ներկայացված ապրանքատեսակի միավորի արժեքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ նաև Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի հայտերի գնահատման և հաղթողի ընտրության կարգը:

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետև՝ նաև Կարգ) 56-րդ կետի համաձայն՝ եթե պայմանագրի գինը կայուն է, ապա մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է մեկ թվով՝ պայմանագրի կատարման համար առաջարկվող ընդհանուր գումարով: Պայմանագրի գինը կայուն է, եթե պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են պայմանագրի կնքման օրվանից հաշված մինչև մեկ, իսկ ապրանքները մատակարարվում և ծառայությունները մատուցվում են մինչև երեք տարվա ընթացքում:

«Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից հայտարարված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի (ծանուցման) և մասնակիցների կողմից ներկայացված հայտերի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ հրավերով (ծանուցմամբ) չի սահմանվել Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հայտերի գնահատման կարգը, իսկ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները Հանձնաժողովի կողմից գնահատվել են Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվող ապրանքի միավորի արժեքով, որի արդյունքում խախտվել են Օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և Կարգի 56-րդ կետով սահմանված պահանջները:

2. «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն Կենտրոնին ներկայացրած բողոքով խնդրել է «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու

ընթացակարգի շրջանակներում պայմանագրեր կնքված լինելու դեպքում, չեղյալ հայտարարել կնքված պայմանագրերը:

Պատվիրատուն 20.11.2013թ. Կենտրոնին ներկայացրած N 121-077 գրությամբ հայտնել է, որ «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն բողոքը ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումով, քանի որ, եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Միաժամանակ հայտնել է, որ «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ն արդեն կնքել է պայմանագրեր հաղթող կազմակերպությունների հետ համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի, այն է՝ Պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Հանձնաժողովի 01.11.2013թ. ժամը 13:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 3-րդ կետով հանձնաժողովը որոշում է կայացրել «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ին, «Լաբրոն-Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ին, «Լիկվոր» ՓԲԸ-ին, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ին, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ին, «Ցիտո-Ֆարմ» ՍՊԸ-ին, «ԱրմՖարմ» ՍՊԸ-ին, «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ին և «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ին որպես ընտրված մասնակիցներ ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ և վերջիններիս հետ կնքել պայմանագրեր, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետի ավարտից հետո:

«ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգով անգործության ժամկետ է սահմանվել ս.թ. նոյեմբերի 5-ից մինչև ս.թ. նոյեմբերի 11-ը ներառյալ:

Պատվիրատուն 04.11.2013թ. էլեկտրոնային նամակներով Ընտրված մասնակիցներին է ներկայացրել կնքվելիք պայմանագրերի նախագծերը և Հանձնաժողովի 01.11.2013թ. ժամը 13:00-ին կայացած նիստի N 3 արձանագրությունը, որից հետո «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի հետ 12.11.2013թ. կնքվել է N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/8, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի հետ 12.11.2013թ.՝ N ՇՀԱՊՁԲ-13/4-5/4, «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի հետ 12.11.2013թ.՝ N ՇՀԱՊՁԲ-13/4-5/9, «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի հետ 13.11.2013թ.՝ N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/1, «Լիկվոր» ՓԲԸ-ի հետ 14.11.2013թ.՝ N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/3, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի հետ 14.11.2013թ.՝ N ՇՀԱՊՁԲ-13/4-5/5, «Լամբրոն-Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ի հետ 14.11.2013թ.՝ N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/2 և

«ԱրմՖարմ» ՍՊԸ-ի հետ 14.11.2013թ.՝ N ՇՀԱՊՁԲ-13/4-5/7 ծածկագրերով դեղորայքի և պատվաստանյութերի գնման պայմանագրեր:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ բաց ընթացակարգի ձևով գնում կատարելու դեպքում, մինչև պայմանագիր կնքելը, պատվիրատուն հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին: Այդ մասին կարող է հայտարարվել՝

1. արդյունքների ամփոփման նիստում՝ հանրային իրազեկման միջոցով, որին հրավիրվել են գնումների գործընթացի բոլոր մասնակիցները

2. նման հայտարարությունը էլեկտրոնային ձևով կամ ֆաքսով կամ փոստով՝ պատվիրված նամակով, կարող է ուղարկվել գնումների գործընթացի բոլոր մասնակիցներին

3. նման հայտարարությունը տեղադրվում է լիազորված մարմնի, իսկ հնարավորության դեպքում՝ նաև պատվիրատուի ինտերնետային կայքում:

• 2-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության հրապարակման օրվան հաջորդող օրվա և պատվիրատուի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրվա միջև ընկած ժամանակահատվածն է:

• 3-րդ մասի համաձայն՝ անգործության ժամկետը գնումների բազային միավորի հիսնապատիկը գերազանցող գնումների դեպքում առնվազն 10 օրացուցային օր է, իսկ չգերազանցող գնումների դեպքում՝ առնվազն 5 օրացուցային օր:

• 5-րդ մասի համաձայն՝ պատվիրատուն պայմանագիրը կնքում է, եթե նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված անգործության ժամկետում որևէ մասնակից գնումների բողոքարկման խորհրդում չի բողոքարկում պայմանագիր կնքելու մասին որոշումը:

Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը կարող է ներկայացվել միայն նույն օրենքի 9-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարել կնքված պայմանագիրը, եթե՝

ա. պատվիրատուն պայմանագիրը կնքել է առանց նույն օրենքի պահանջների համաձայն պայմանագրի մասին ծանուցում հրապարակելու,

բ. նույն օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, եթե նման խախտումը զրկել է շահագրգիռ մասնակցին նախքան պայմանագրի կնքումն իրավական պաշտպանության միջոցների դիմելու

հնարավորությունից, և եթե նման խախտումը համադրված է պետական գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ պահանջների խախտման հետ, և եթե վերջին խախտումն ազդել է պայմանագիր կնքելու շահագրգիռ մասնակցի հնարավորությունների վրա:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի չեղյալ հայտարարել կնքված պայմանագիրը Օրենքի 9-րդ հոդվածի կամ 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները խախտելու դեպքում, Գնումների բողոքարկման խորհուրդը գտնում է, որ «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքով «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքված պայմանագրերը չեղյալ հայտարարելու պահանջն ենթակա չէ բավարարման, քանի որ բացակայում են կնքված պայմանագրերը չեղյալ հայտարարելու՝ Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հիմքերը:

Ինչ վերաբերում է Պատվիրատուի 20.11.2013թ. N 121-077 գրությամբ ներկայացված այն պնդմանը, որ «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ն բողոքը ներկայացրել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի խախտումով, անհիմն է, քանի որ Ընկերության կողմից 14.11.2013թ. բողոքով պահանջվել է դադարեցնել «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը և չեղյալ հայտարարել կնքված պայմանագրերը, իսկ «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշումը չի բողոքարկվել, հետևաբար բողոքն ընդունվել է քննության Օրենքով սահմանված պահանջներին համապատասխան:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ նույն հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետով նախատեսված չեղյալ հայտարարելու պատժամիջոցը չի կարող ունենալ հետադարձ ուժ (քանի որ անհնար է վերացնել կատարված պայմանագրային պարտավորությունները), հանձնաժողովը, ի հավելումն, կիրառում է նույն հոդվածի 6-րդ մասի 4-րդ կետի ա. ենթակետով նախատեսված պատժամիջոցը:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ Խորհուրդն իրավունք ունի հայտարարելու պատվիրատուի գնումների ընթացակարգի օրինական կամ ապօրինի լինելու մասին՝ պայմանագիրը կնքելուց հետո:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ թեև «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքով Կարգի 56-րդ կետի

խախտման պատասխանը որոշակի է, սակայն «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից ընթացակարգի ընտրված մասնակիցների հետ արդեն կնքվել են պայմանագրեր և պայմանագրերով նախատեսված պարտավորությունների մի մասը տվյալ պահի դրությամբ կատարվել են և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 5-րդ մասը, 6-րդ մասի 5-րդ և 6-րդ կետերը, Գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «Ցիտո Ֆարմ» ՍՊԸ-ի կողմից 14.11.2013թ. Կենտրոնին ներկայացված բողոքը մերժել:

2. «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի կողմից դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5» ծածկագրով շրջանակային համաձայնագրի միջոցով գնում կատարելու ընթացակարգը հայտարարել ապօրինի:

3. «Վաղարշապատի պոլիկլինիկա» ՊՓԲԸ-ի և «Ֆարմ Թրաստ» ՍՊԸ-ի միջև 12.11.2013թ. կնքված N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/8, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի՝ 12.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/4, «Մեդիկալ Հորիզոն» ՍՊԸ-ի՝ 12.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/9, «Ալֆա Ֆարմ» ՓԲԸ-ի՝ 13.11.2013թ. N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/1, «Լիկվոր» ՓԲԸ-ի՝ 14.11.2013թ. N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/3, «Վագա Ֆարմ» ՍՊԸ-ի՝ 14.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/5, «Լամբրոն-Ֆարմիմպեքս» ՍՊԸ-ի՝ 14.11.2013թ. N ՎՊ-ՇՀԱՊՁԲ-13/4-5/2 և «ԱրմՖարմ» ՍՊԸ-ի՝ 14.11.2013թ. N ՇՀԱՊՁԲ-13/4-5/7 ծածկագրերով պայմանագրերի կատարման ժամկետները կրճատել և սահմանել մինչև ս.թ. դեկտեմբերի 20-ը ներառյալ:

Գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

Գնումների բողոքարկման խորհրդի կայացրած որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողովի՝

Նախագահ՝ Ազգանուշ Ֆրանգյան

Անդամ՝ Մանե Նազարյան